

Կ. ՆԵՐՄԻՍՅԱՆ

ԼՂՀ ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ

ՈՒՂԵՐԶ

Ցանկացած երկրում ժողովրդագրական իրավիճակը հստակ պատկերացնելու, սոցիալ-տնտեսական զարգացման հեռանկարները որոշելու նպատակով խիստ անհրաժեշտ է բնակչության մասին մանրամասն վիճակագրական տվյալների առկայությունը:

2005 թվականին անցկացված առաջին մարդահամարից հետո մեր երկրում տեղի են ունեցել սոցիալ-տնտեսական էական փոփոխություններ, բնակչության թվաքանակի, տեղաբախման, սոցիալ-ժողովրդագրական, տնտեսական ակտիվության, տնային տնտեսությունների բնակության պայմանների, կենսամակարդակի և այլ բնութագրիչների հետ կապված:

Տնտեսական և սոցիալական բարեփոխումների ուղի բռնած մի երկրի համար, ինչպիսին Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունն է, շատ կարևոր է ապահովել մարդահամարների պարբերաբար անցկացումը, քանի որ դրանց արդյունքներն էական նշանակություն կունենան երկրի պետական և տնտեսական քաղաքականության մշակման, պլանավորման և կառավարման համար, ինչպես նաև հնարավորություն կտան ուսումնասիրել հասարակական և տնտեսական զարգացման մակարդակներում տեղ գտած փոփոխություններն ու կանխորոշել հետագա առաջընթացի նոր ուղղություններն ու սկզբունքները: Այդ գործընթացները վերլուծելու, գնահատելու և կառավարելու համար անհրաժեշտ է ճշգրիտ և հավաստի տեղեկատվություն բնակչության թվաքանակի, աշխարհագրական տեղաբախման, սոցիալ-ժողովրդագրական բնութագրի, զբաղվածության, տնային տնտեսությունների բնակության պայմանների և այլ բնութագրիչների վերաբերյալ, քանի որ նշված կտրվածքներով և հատկանիշներով ամբողջական տեղեկությունների ստացման հիմնական աղբյուրը մարդահամարներն են:

Մարդահամարը բարձր մակարդակով և կազմակերպված անցկացնելու համար պահանջվեց հսկայածավալ աշխատանք, որն անմիջականորեն իրականացրեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությունը՝ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, շահագրգիռ կազմակերպությունների աջակցությամբ:

Լեոնային Ղարաբաղի Հանրապետության 2015 թվականի մարդահամարն իրականացվեց պատշաճ մակարդակով, որն իրագործեց իր առջև դրված բոլոր խնդիրները:

Համոզված եմ, որ մարդահամարի արդյունքները մեծապես կնպաստեն հանրապետության սոցիալ-տնտեսական հետագա զարգացմանը:

Երախտիքի խոսքեր եմ հղում մարդահամարի նախապատրաստման, անցկացման և նյութերի մշակման աշխատանքների անմիջական մասնակիցներին, հանրապետության ողջ բնակչությանը՝ ակտիվ մասնակցության, Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությանը՝ Լեոնային Ղարաբաղի Հանրապետության 2015 թվականի մարդահամարի աշխատանքներին ցուցաբերած մեթոդաբանական և կազմակերպական մեծ աջակցության համար: